

իբր ծովակ մը, որուն շրջապատը 15 օրուան մէջ կարելի էր դառնալ (տող 110):

Յովհաննէս Թիւթիւնծի այս առթիւ կը նկարագրէ Նեղոսի ակը, որ կը թափի այս ծովակին մէջ, և անյիտանցնելով կ'առաջանայ ձորամէջ ճամբով մը դէպի Եգիպտոս:

Այսպէս, Յովհաննէս Թիւթիւնծի կը գտնէր Նեղոսի աղբերակերը, առաջին սպիտակամորթը հանգիստնալով այս բաղձալի ակը տեսնող: Այս պատահական գիւտէն յետոյ, երբ չորս ամիս անցած էր հապէշ մայրաքաղաքը հասնելէն ի վեր, կայսրէն հրաման կ'ուզէր մեկնելու: Թագաւորը կ'արտօնէր և իրեն յանձնարարական գիր կու տար, ուղղուած Սնարու Բագին Թագաւորին, որուն երկիրը կը գտնուէր Հսպէշխատունի և Օսմանեան տիրապետութեան ենթարկուած երկիրներու միջև:

Յովհաննէս եպօ. Թիւթիւնծի 20 օր ճամբորդելով կը հասնի Չանկ Ծագայ, որ կը թուի թէ հապէշական սահմանին վրայ վայր մըն էր, վասնզի բնակիչները կռապաշտ արարներ էին, կէս մը քրիստոնեայ դարձած: Ագոնցի Աբխազիագուրթեան մէջ այս մասին չգտանք ոեւէ լուսարանութիւն: Միայն (Ափրիկէ, էջ 576) կը յիշատակուի ինն ձիւսիմ անուն աւան մը, «մեծ եւ զուարեակի առ Ռահք վսակաւ, որ միացեալ ընդ Տոնիստ վսակին, խառնի ի Նեղոս», որ կրնայ ճիշդ ըլլալ. վասնզի «աս սովոր են զսեղի առնուլ կարաւանք՝ որք զան եւ զնան ի Հապեօ սակս վանառակա՛նութեան» (նոյն): Յովհաննէս Թիւթիւնծի ալ թերեւս ինն դացած էր իբր կարաւանատեղի: Հինկէ 23 օր Նեղոսի վրայ նաւարկելով կը հասնի Սնարու երկիրը, որուն Բագին Թագաւորը զինքը վար կը դնէ մինչև կարաւանի մը ճամբայ ելլելը: